

# Զորություն, Սեր և Կարգուկանոն

Հովսեփ Հովսեփյան

Ընթերցանություն Բ Տիմոթեոս 1

Աշխարհում թյուրընկալում կա այն մասին, որ Աստծուն, Հիսուսին, երկնքին, դժոխքին և հետմահու կյանքին հավատալն ու Քրիստոսի ուսմունքին հավատարմորեն հետևելը թուլության նշան է և ամաչկոտության, վախի, անապահովության, դժբախտության արդյունք: Սա իսլամիս տեսակետ չէ. աշխարհը չգիտի, որ հենց ճիշտ հակառակն է: Վերստին ծնված հավատացյալն այլևս չի ապավինում իր սեփական ուժին և կարողությանը, այլ միանում է Աստծո զորության, իմաստության և սիրո աղբյուրին և վայելում է Սուրբ Հոգու միջոցով Աստծուց տրված գերբնական հաճույքներն ու պարգևները:

<<Որովհետև Աստված չտվեց մեզ երկչոտության հոգի, այլ զորության և սիրո և զգաստության: Ուրեմն ամոթ մի՛ համարեք մեր Տիրոջ վկայությունը>> (Բ Տիմ. 1.7-8):

Այստեղ Պողոս առաքյալը խոսում է Սուրբ Հոգու մասին, որը բնակվում է ճշմարիտ հավատացյալի մեջ: Սուրբ Հոգին մեր մեջ ոչ թե վախ է առաջացնում, այլ զորություն, սեր ու կարգուկանոն: Յուրաքանչյուր հավատացյալ ունի այդ երեքի կարիքը:

Աստված Սուրբ Հոգու միջոցով մեզ տալիս է զորության հոգի: Սեր տրամադրության տակ անսահմանափակ ուժ կա: Պողոս առաքյալը նախքան բանտում նահատակվելը վերոնշյալ նամակն է գրում Տիմոթեոսին: Մի՞ թե Պողոսն ամաչկոտ և վախեցած մարդ էր: Ամենևին էլ ո՛չ: Երբ կրոնական առաջնորդն ապահով նստած է իր փողոսկրե ապարանքում և նամակ կամ գիրք է գրում՝ ժողովրդին հորդորելով չմտահոգվել կամ չվախենալ, քանզի Հոգին կպաշտպանի նրանց, դա տեսություն է: Բայց երբ գրում է այն մարդը, որը բանտում է և անարդացիորեն շուտով պիտի մահանա, դա ուժ է, զորության իսկական դրսևորում, Սուրբ Հոգու կենդանի զորության փորձառում, որի միջոցով հավատացյալը կարող է ծառայել ու ապրել առանց վախի, հարատևել և տոկալ, հաղթականորեն տառապել և նույնիսկ արժանապատվությամբ մահանալ:

Աստված մեզ տվել է նաև սիրո հոգի: Աստծո հանդեպ ունեցած մեր սերն է, որ վանում է բոլոր վախերն ու Քրիստոսին ամեն գնով նվիրվելու ցանկություն է առաջացնում:

<<Հոգու պտուղը սերն է>> (Գաղ. 5.22):

Քրիստոսի, Աստծո Խոսքի, հավատացյալների և անհավատների հանդեպ ունեցած մեր սերը Սուրբ Հոգուց է բխում:

<<Աստծո սերը սփռված է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու ձեռքով, որ տրվեց մեզ>> (Հռոմ. 5.5):

Ըստ էության՝ մարդու հանդեպ ունեցած մեր սերն է, որ ամեն տեսակի հալածանք, չարչարանք կրելու և քաղցրությամբ պատասխանելու պատրաստակամություն է տալիս: Եթե դու լցված ես Սուրբ Հոգով, ապա դու գիտես, թե ինչի մասին եմ խոսում: Սուրբ Հոգին մեզ նաև ինքնատիրապետում է տալիս: Մենք պետք է ոչ թե անմտորեն վարվենք ու հապճեպ քայլեր

ձեռնարկենք, այլ խոհեմ ու շրջահայաց լինենք: Անկախ հանգամանքներից մենք պետք է զգույշ լինենք և պահենք մեր հավասարակշռությունը, դա հեշտությամբ կամ ինքնըստինքյան չի տրվում: Մեր բնությունն ասում է. <<Արա՛գ գործիր>>, և մեր արձագանքները սովորաբար հիմնված են մեր հույզերի, ոչ թե տրամաբանության կամ սիրո վրա:

Արդ բոլոր երեք առանձնահատկությունները՝ զորությունը, սերն ու կարգուկանոնը, լավագույնս դրսևորեց Հիսուս Քրիստոսը: Շատերն էլ հետևեցին Նրա քայլերին: Որպես եկեղեցի և անհատներ արդյո՞ք մենք քայլում ենք Նրա հետքերով:

Արդյոք դու փորձառու՞մ ես Սուրբ Հոգու զորությունը, սերը և քո մեջ կա՞ կարգուկանոն: Եթե փորձառում ես, ուրեմն Փա՛ռք Աստծո: Եթե վստահ չես կամ չգիտես ինչպես ընդունել այս զորությունը, հիշի՛ր Հիսուսի խոսքերը.

<<Դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեր վրա կգա>> (Գործք. 1.8):

Մենք Սուրբ Հոգին ստանում ենք միայն վերստին ծնունդ ստանալու միջոցով: